ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
Հայաստանի շախմատի ֆեդերացիայի
Նախագահ՝

Ս. Սարգսյան

“10” դեկտեմբեր 2025 թ.

Հայաստանի կանանց 81-րդ առաջնության
Բարձրագույն խումբ

Կանոնակարգ

Մրցաշարը կանցկացվի հունվարի 12-22-ին Երևանում, Տ. Պետրոսյանի անվան շախմատի տուն-մարզադպրոցի դահլիճում: Այն կանցկացվի համաձայն ՖԻԴԵ-ի շախմատային կանոնների, շրջանաձև մրցակարգով՝ 10 մասնակիցներով:

Մասնակիցները՝ ըստ Հայաստանի շախմատի ֆեդերացիայի կողմից հաստատված կանոնադրության:

Ժամակարգը՝ յուրաքանչյուրին պարտիայում առաջին 40 քայլի համար տրվում է 90 րոպե, հետո 30 րոպե մինչև պարտիայի ավարտը՝ 30 վայրկյան քայլի համար հավելումով սկսած առաջին քայլից:

ԽԱՂԱՑԱՆԿ

Հունվարի	12	-	Ժամանում և առաջնությունների բացումը	-	15.00
Հունվարի	13	-	I տուր	-	15.00
Հունվարի	14	-	II տուր	-	15.00
Հունվարի	15	-	III տուր	-	15.00
Հունվարի	16	-	IV տուր	-	15.00
Հունվարի	17	-	V տուր	-	15.00
Հունվարի	18	-	VI տուր	-	15.00
Հունվարի	19	-	VII տուր	-	15.00
Հունվարի	20	-	VIII տուր	-	15.00
Հունվարի	21	-	IX տուր	-	15.00
Հունվարի	22	-	Մրցաշարերի փակումը	-	17.00

Պարտիայի սկզբին թույլատրելի ուշացման ժամանակը սահմանված է 15 րոպե:

Հավասար միավորների դեպքում առավելությունը տրվում է համապատասխանաբար ըստ՝

- Զոնեբորն-Բերգերի համակարգի,
- սև գույնի խաղաքարերով խաղացած պարտիաների առավելագույն թվի,
- անձնական հանդիպման (հանդիպումների) արդյունքի,
- հաղթանակների առավելագույն թվի:

1-ին տեղի համար բոլոր նշված ցուցանիշների հավասարության դեպքում մրցաշարի ավարտի հաջորդ օրը կանցկացվի արագ շախմատի լրացուցիչ մրցամարտ հետևյալ մրցակարգով: Նախ, կանցկացվի 2 պարտիայից բաղկացած մրցամարտ՝ 15 րոպե պարտիայի համար 10-ական վայրկյան յուրաքանչյուր քայլի համար հավելումով: Եթե հավասարությունը պահպանվի, ապա կխաղացվի ևս 2 պարտիայից բաղկացած մրցամարտ՝ 5 րոպե պարտիայի համար 3-ական վայրկյան յուրաքանչյուր քայլի համար հավելումով: Եթե հավասարությունը կրկին պահպանվի, ապա գույնի նոր վիճակահանությունից հետո կխաղացվեն լրացուցիչ պարտիաներ նույն ժամակարգով մինչև առաջին հաղթանակը: Այդ դեպքում յուրաքանչյուր զույգ պարտիայից հետո կկատարվի գույների հերթականության փոփոխություն:

Հայաստանի չեմպիոնը իրավունք կնվաճի 2026 թ. հանդես գալու Հայաստանի ազգային հավաքականի կազմում:

Մրցաշարում 1-3 տեղեր գրաված շախմատիստներն իրավունք կնվաճեն հանդես գալու Հայաստանի 82-րդ առաջնության բարձրագույն խմբի մրցաշարում:

Գլխավոր մրցավար,
միջազգային մրցավար՝ Ա. Վարդապետյան